

կողմէ յառաջ այդպիսի ճոխ արձանագրութիւն մը կ'արժէ ոչ: Խնդրական է այս:

Ինձիճեան ծանօթ է այս տարբեր թուականներուն¹. Բայց 1391-ով, Ս. Լուսաւորչի հողը գնելու թուականը կը նշանակէ. 1436-ով ալ, Ս. Լուսաւորչի շինութիւնը՝ ըստ արձանագրութեան. բայց սխալ է այս. վասն զի մեր յիշատակարանը 1391ին շինութիւն եւ հող գնելու պատճառով թիւներ չգատեր: Երկուքը՝ մէկ տարւան գործողութիւններ են: Ըստ իս թիւ 1391 եւ թիւ 1436 Ս. Լուսաւորչի զատ զատ շինութիւններն են: Այսինքն՝ նախ Կաֆացի Կողմնոյ կամ Կոմս կը գնէ Ս. Լուսաւորչի հողը ու կը շինէ 1391ին: Քանզի տարի ետքը կը հրդեհուի² Կոմսին շինածը եւ այս անգամ նորէն Կաֆացի վաճառականներն են որ իրենց հայրենակցին շինածը կը վերաշինեն 1436ին:

Անշուշտ Բէօմիւրճեան Երեմիա Չէլէպիի սա'տողերը ուրիշ իմաստ մը չունին.

“Չաա շինեն Կաֆացիի Պաղիկեանքն յանձն Նախնական, թիւն ութհարիւր ութսուն հինգ, ընդ Յունաց տիրապետութեան³”:

Չաա, (= զՍուրբ Գրիգոր Լուսաւորիչ), հրդեհէն կամ փլելէն ետքը, Կոմսին հայրենակիցները, 885 (= 1436)ին, նորէն կը շինեն “յանձն Նախնական”. ըսել է Նախնական ուրիշ եկեղեցի մը շինուած էր, Ս. Լուսաւորչի անունով:

1 Փիրղալէմեան ալ գիտած է թուականներու շփոթ մը արձանագրութեան մէջ, բայց չէ կրցած ճշդել (Տէս Նօթարի Հայոց էջ 106-107, ծանօթ. 3):

2 Կամ Կ'այրի եւ կամ շատ հարեւանցի շէնք մ'եղած կրնայ ըլլայ Կոմսին շինածը, այնպէս որ 25 տարի ետքը՝ պէտք կը տեսնեն վերաշինելու:

3 Հմմտ. Ընդարձակ Օրացոյց 1901 տարւոյ (էջ 78): Այս ստղերը բնագրին վրայ ալ ստուգեցի, որ Տօթ. Վ. Յ. Թորգոմեանի քո՞փն է: